# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Առինջ բնակավայր 19.12.2025 թ.

2025 թվականի դեկտեմբերի 19-ին՝ ժամը 12:00-ին, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքով (այսուհետ՝ օրենք) և Կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի N 2343-Ն որոշմամբ սահմանված կարգով, Կոտայքի մարզի Աբովյան համայնքի Առինջ բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում տեղի ունեցավ քաղաքացի Հայկ Մանուկյանի կողմից փորձաքննության ներկայացված՝ Առինջ բնակավայրում բնակելի շենքի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ հանրային 2-րդ լսումը:

Բացման խոսքով հանդես եկավ Առինջ բնակավայրի վարչական ղեկավար Էմիլ Ղուկասյանը և խոսքը փոխանցեց «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ Քրիստինե Հարությունյանին: Հարությունյանը նշեց, որ փորձաքննության գործընթացն իրականացվում է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքով սահմանված կարգով և ներկայացրեց փորձաքննության գործընթացը, նշեց, որ փորձաքննության գործընթացին մասնակցել են պետական կառավարման մարմինները, տեղական ինքնակառավարման մարմինները և ՇՄՆ ստորաբաժանումները, խոսեց նախատեսվող գործունեության արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունների և բնապահպանական ռիսկերի մասին: Նշեց, որ նախաձեռնողը ՇՄԱԳ-ում նախատեսել է մի շարք մեղմացուցիչ միջոցառումներ, կազմել է բնապահպանական կառավարման պլան և մշտադիտարկումների ծրագիր, որոնք հնարավորություն կտան մեղմելու և նվազեցնելու հնարավոր ազդեցությունները: Հարությունյանը ներկաներին տեղեկացրեց, որ առաջարկություններ ունենալու դեպքում կարող են դրանք ներկայացնել բանավոր կամ ուղարկել «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի պաշտոնական էլեկտրոնային փոստին և խոսքը փոխանցեց նախաձեռնողի ներկայացուցիչներին:

Նախաձեռնողի ներկայացուցիչ Արմեն Եղիազարյանը ներկայացրեց նախատեսվող գործունեության տեխնիկա-տնտեսական ցուցանիշները, նախատեսվող գործունեության վերաբերյալ ընդհանուր տեղեկություններ, ներկայացրեց շինարարական աշխատանքների կազմակերպման միջոցառումները և շինարարության փուլում նախատեսվող աշխատանքները: Այնուհետև խոսքը փոխանցվեց քաղաքացի Հայկ Մանուկյանի լիազորված անձ Դավիթ Մելքոնյանին: Նա ներկայացրեց բնակելի թաղամասի կառուցման ընթացքում նախատեսվող բնապահպանական ռիսկերի

նվազեցմանն ուղղված նախատեսվող միջոցառումները՝ մթնոլորտային օդի, ջրային ռեսուրսների, հողի որակի հետ կապված: Նշեց, որ հիմնական ազդեցությունները նախատեսվում են կապված փոշու արտանետումների հետ, որի ազդեցությունը մեղմացնելու նպատակով նախատեսվել են միջոցառումներ՝ օրինակ, պարբերաբար իրականացվելու է ջրցան:

Հարությունյանը հետաքրքրվեց նաև կոյուղու և կեղտաջրերի հեռացման վերաբերյալ, ինչին ի պատասխան նախաձեռնողի ներկայացուցիչը նշեց, որ կեղտաջրերը հեռացվելու են տարածքի կառուցապատողների միջոցներով կառուցվող նոր կոյուղու միջոցով:

Նախատեսվող գործունեության վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացվելուց հետո Հարությունյանը խոսքը փոխանցեց ներկաներին՝ իրենց առաջարկությունները, դիտողությունները ներկայացնելու և հուզող հարցերը հնչեցնելու համար:

Վարչական ղեկավարը հետաքրքրվեց նախատեսվող բնակարանների քանակով, մյուսների կողմից հարցեր չհնչեցին:

Ք. Հարությունյանը ամփոփեց հանրային լսումը և շնորհակալություն հայտնեց ներկաներին:

Հանրային լսմանը մասնակցում էին ազդակիր համայնքի բնակիչներ, համայնքի և նախաձեռնողի ներկայացուցիչները:

Հանրային լսման լուսանկարները կցվում են սույն արձանագրությանը:

Վարող և քննարկումների պատասխանատու՝ Ք. Հարությունյան

Լիազորված անձ՝ Դավիթ Մելքոնյան